

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Խաչիկ Հարությունյանի, Հեղինե Բիշարյանի, Մարգարետունի Մանուկյանի և Իշխան Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ընդունելի համարելով նախագծով առաջարկվող փոփոխությունը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ թեև նշված հարցն անմիջականորեն կարգավորված չէ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սակայն, համաձայն օրենքի 31-րդ հոդվածի, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանն իրավասություն է վերապահ-

ված, ելնելով ապահովադիրների և տուժողների շահերից, պահանջներ սահմանել ԱՊՊԱ ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ: Հիմք ընդունելով օրենքի նշված հոդվածը՝ բյուրոն արդեն իսկ մշակել է համապատասխան կանոնների նախագիծ, որը դրվելու է առաջիկա խորհրդի նիստի քննարկմանը:

Կանոնների նախագծով, ի թիվս մի շարք հարցերի, նախատեսվում է առավել օպերատիվ կերպով լուծել նաև նախագծով բարձրացված խնդիրը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Հայտնում ենք նաև, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության  
պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
վերաբերյալ**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության  
պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
 <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող  
 պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին> ՀՀ  
 օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքի նախագծի  
 բնապահպանության  
 բնագավառում կարգավորման

1. <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող  
 պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին»  
 Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»  
 Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ  
 թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում  
 կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)

գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ պայմանագիր կնքելը մերժելու պարճառի գրավոր ներկայացմանը*, և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա զգալի ազդեցություն չի նախատեսվում հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

#### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

**«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում**

ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

**Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների շուկայի հետ և Նախագիծը ուղղված է ապահովագրական ընկերությունների՝ ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի կողմից ավտոտրանսպորտային միջոցը ապահովագրելու նպատակով ներկայացված դիմումը մերժելու գործընթացի կարգավորմանը:**

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Նախագծերի ընդունմամբ համապատասխան ապրանքային շուկայում մատակարարների քանակի ուղղակի, անուղղակի սահմանափակում կամ վերջինիս հնարավորություն, միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակում կամ սահմանափակման հնարավորություն, միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակում և դրա հնարավորություն չի առաջանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

#### *ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ*

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ տեղեկանք հիմնավորումը՝ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն չի ունենա:

## Եզրակացություն

**<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի(այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

Նախագիծ  
Պ-1132-18.04.2011-ՖՎ-010/0

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

**Հոդված 1.** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 9-ի ՀՕ - 63 օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին նախադասության մեջ՝ «խախտման» բառից հետո, ավելացնել «դիմումի մերժման դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է գրավոր դիմումը ստանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, գրավոր տեղեկացնել դիմումատուին մերժման մասին՝ շարադրելով մերժման պատճառները»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 9-ի ՀՕ - 63 օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ապահովագրական ընկերության կողմից ԱՊՊԱ պայմանագրի կնքելուց անհիմն խուսափելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 461 հոդվածով սահմանված կանոնները, ըստ որոնց, եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագրի կնքելը, խուսափում է այն կնքելուց, ապա մյուս կողմը իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագրի կնքելուն հարկադրելու պահանջով: Օրենքում լրացումներ կատարելը թույլ կտա, որպեսզի պայմանագրի կնքելու պահանջով հանդես եկող կողմը, այն է՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, կարողանա դատարան կամ ապահովագրության վերադաս մարմիններին ներկայացնել գրավոր հիմք՝ ապահովագրական ընկերության կողմից պայմանագրի կնքելուց հրաժարվելու մասին: